

Վ Կ Ա Յ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Քրիստոնէութեան համար կեանքը զոհելը՝ կ'ըստի Մարտիրոսութիւն. կեանքը զոհողը կ'ըստի մարտիրոս կամ վկայ, իսկ իր գործերուն և չարարանքներուն պատմութիւնը կը կոչուի վկայաբանութիւն, և գիրքը՝ որ կը պարունակէ այս ամէնը՝ մեր մէջ կ'ըստի ՅԱՅՍՄԱՌՈՒՐԳ. վասն զի իրենց մարտիրոսութեան օրը կը նշաւ նակուի պատմութեամբ ի միասին:

Մարտիրոսագրութեանց մէջ պէտք է ուշադրութեան առնուլ երեք կարեւոր բաներ, իսկ՝ իրենց գործերը, երկրորդ՝ իրենց չարարանքները և երրորդ՝ ասոնց չարայարութիւնը կամ հիւսուածքը:

Գործք Առաքելոցը մեր առջև կը պարզէ Առաքելոց ընդհանուր գործերը և ի մասնաւորի Ս. Ստեփանոսի մարտիրոսութիւնը, Պողոս և Պետրոս առաքելոց քարոզութիւնները, չարչարանքը և գործերը: Ժամանակակից և ականատես և ականջալուր և նոյն իսկ գործակից անձ մ'է՛ք՝ որ կը ներկայացնէ մեզ այս ամէնը: Հին եկեղեցւոյ մէջ՝ զիտենք Եկեղեցւոյ սրբազան պատմաօրէն՝ Եւսեբիոսէ, թէ մարտիրոսաց վկայաբանութիւնք մասնաւոր կերպով կը գրուին և կ'աւանդուէին այլոց ևս, ինչպէս Ս. Պողոկարսի մարտիրոսութիւնը, Աստուածազգեաց հայրապետին՝ Ս. Իզնատիոսի նահատակութիւնը և Լիոնի նահատակաց վկայութիւնքը, և այլն:

Եկեղեցապատուեք կը նշանակեն, ինչպէս Ս. Կղերմէս՝ Հռովմայ հայրապետը՝ երկրորդ դարուն սկիզբը՝ նոտարներ (notarii, exceptores) սահմաններ էր, որ գրէին սրբոց վարքն և անոնց նահատակութիւնքը: Ասոնք կամ ուղղակի ականատես և ականջալուր էին, կամ կը քաղէին ուղղակի ականատեսէ մը և կամ ուղղակի դատավարութեան ատենագրութիւններէն (ex actis publicis) կ'օգտուէին:

Ատենագրութեանց կատարեալ ստուերգիրն ունինք առջևնիս, որով Հռովմէական պետութեան մէջ ինչպէս և ինչ կարգով կ'արձանագրուէին դատավարութիւնք: Նախ կը նշանակուէր իշխանապետութեան անունը և ապա կը յաջորդէին օրոտան և ամսուան թուականը, առաւօտեան կամ երեկոյեան պահը, ատենակալին անունը և պաշտօնը, եղեւնական ատենին վայրը, դատատառնին սկզբնաւորութիւնը, նախագահին հրամանը՝

որպէս զի յանցաւորը ներկայանայ: Աստի կը սկսի պաշտօնական հարցափորձը:

Նախագահը կը հարցնէ միջնորդի մը միջոցաւ յանցաւորին անունը և մականունը, վիճակը և ազգատեմը, ծննդավայրը և արուեստը, ընկերական պայմանը և կրօնքը: Եւ երբ կը լսէ քրիստոնեայ ըլլալուն խոստովանութիւնը՝ Գաջ խորհէ՛, կը զուրցնէ, զթա՛ վրադ:

Անդրդուելի գտնելու պահուն՝ զինքը կը մատնէ չարչարանաց, կը հրամայէ պրկել, զարնել ընրանին, կ'ապսպրէ ըսել իրեն՝ որ չհայհոյէ աստուածոց դէմ՝ ապտակի կու տայ: Ըսէք իրեն՝ կ'ըսէ, յիմարութիւն չընէ, թող զոհէ՛, զարկէք բերանին, և ըսէք որ պատասխանէ: Զարչարեցէք զինքը, երկաթէ հղունգներով կապեցէք: Իշխանապետը կը հրամայէ կարգալ ատենագրութիւնը: Նախագահը խորհրդականներով կը սահմանէ վճիռը և նախագահը կ'ընթիւնու, և կամ՝ ընթիւնու կու տայ զայն:

Այս է ընդհանուր վկայաբանութեանց արձանագրութեան բովանդակութիւնը, և ըստ այսմ յօրինուած են մարտիրոսաց գործոց և չարչարանաց պատմութիւնքը: Այլապի որ հին մարտիրոսագրութիւն կը գտնենք ամէն ազգաց մէջ, թէ և շատ աղաւաղումներ կը գտնուին, բայց այդ վաղեմի աղաւաղութիւնք իսկ ժամանակակից ու գերանութիւնք և դէպքեր մեր առջև կը ներկայացնեն, զորոնք պատկերացնել ճշդութեամբ՝ ստուգիւ հարտար և բազմաճանաչ և բազմազնին մտաց գործ է:

Քրիստոնէութեան առաջին դարէն սկսեալ սովորոյթ էր ընթիւնուլ եկեղեցւոյ մէջ մարտիրոսագրութիւնք, և մասն կը կազմէր եկեղեցական պաշտամանց, ինչպէս որ կը գտնենք մեր եկեղեցւոյ մէջ ալ, որ Զայսմաւուրց կը կարգացուէին: Միշին դարու մէջ համառօտ պատմագրութիւնք զարգարուեցան մերթ անճիշդ պարագաներով և դէպքերով, զորոնք այժմ այդի սրբախօսք քննութեանց բովէ անցնելով՝ անվաւեր դատեցին: Եւ ինչ որ երբորդ և չորբորդ դարերու ժամանակ ևս յաւելուածներ եղեր էին դիւանագրութեանց հրճիգութեան և կորստեան պատճառաւ՝ նրբամիտ դատաքննիչք զատուք ևս կը ջնախն ճշդիւ և իրական մարտիրոսագրութիւններ երևան հանել:

Մարտիրոսացրոյքեան հին հասարածոյք՝
 ականացած են դարերու միջոց: Եկեղեցիք
 սովորութիւն ունէին նստարններու միջոցաւ
 գրել սրբոց մարտիրոսութիւնը և զայն
 հաղորդել այլ եկեղեցեաց, ինչպէս կը գրու-
 նենք Եւսեբեայ Եկեղեցւոյ Պատմութեան
 մէջ, ինչ որ Պօղոս առաքեալն այլ բրած
 էր, որ իր թուղթերն, ոչ միայն՝ որոնց
 ուղղած էր՝ իրենք կարդան, այլ և մեր-
 ձաւոր եկեղեցեաց ալ հաղորդուի կը հրա-
 մայէր: Առաջին անգամ կը թուի որ այս
 մարտիրոսագրութեանց հաւաքումն բրած
 ըլլայ Եւսեբիոս Կեսարացին, ժողովելով
 Աքայիոյ, Զմիւռնիոյ, Իկոնիոնի, Անտիո-
 քայ, Աղեքսանդրիոյ և այլ եկեղեցեաց
 մէջ գտնուած սրբոց վկայարանութիւնքը՝
 անուանելով մատեանն ՏՄՄԱԴՄԻՆՏ
 μαρτυριών αρχαίων = Հաւաքածոյ հին
 մարտիրոսաց: Դժբախտաբար հին յունա-
 րէն բնագիրը ժամանած չէ: Ս. Սեդրեա-
 տրոսի յունարէն վկայարանութեան մէջ
 յայտնապէս կայ այս բանս, որ Եւսեբիոս
 Պամփւլեացի իր եկեղեցական պատմու-
 թեան մէջ կը լռէ, ինչ որ ինքը այլ հե-
 ղինակութեամբ հրատարակել էր: Արդարեւ
 քսան և մի գիրքեր յօրինել է՝ բովան-
 դակելով զրեթէ համօրէն մարտիրոսաց,
 եպիսկոպոսաց և հաւատարի խոստովանողաց
 չարչարանքները, և այլն, օգտուելով զուցէ
 Կեսարիոյ գրատան մէջ ամփոփուած մար-
 տիրոսագրութիւններէն՝ ըստ փեթրայ ծի-
 տնաւորին: Անհաւանական չէ, որ այս
 գործէս օգտուած ըլլայ Ս. Հերոնիմոս՝
 Սուրբ Հարանց վարքն յօրինած պահուն:
 Աղեքսանդրիոյ Եււղիոս հայրապետը Գրի-
 գոր Ա. Քահանայապետէն վեցերորդ դա-
 րուն մէջ՝ օրինակ մը կը ինդէրէ հեղի-
 նակութենէս, րայց դժբախտաբար չէ գրու-
 նուած նոյն դիւանին մէջ:

Եւսեբիոս հաւաքած էր և այլ ծաղկա-
 ցաւ մը՝ յորջորջմամբ Յաղագս Պաղեստի-
 նացի սրբոց՝ Περί τῶν ἐν Παλαιστίνῃ
 μαρτυροσάντων: Այս գործս՝ հիմն է փոքր
 Ասիոյ մէջ յօրինուած մարտիրոսագրու-
 թեանց. համառօտ Ասորական լեզուով

Թարգմանութիւնն մեզ հասեր է 412 թուա-
 կանին գրուած:

Ս. Հերոնիմոս ևս հաւաքել է մարտի-
 րոսագրութիւն մը (Martyrologie hie-
 ronymien), Մի ևեթ ձեռագիր հասեր է
 աստի:

Ինններորդ դարուն Վիեննայի արքեպիս-
 կոպոսը Անտոն, հաւաքեց մարտիրոսա-
 գրութիւնք՝ համառօտելով զանոնք:

Հ. Լըքլէրը, հայ վկայարանութեանց
 աղբերաց՝ ինչպէս և իրեն քրիստոնէութեան
 սկզբնաւորութեան նկատմամբ հետեւեալ
 տեղեկութիւնները կը ղնէ:

Հայ ազգը զրեթէ ամբողջովին չորրորդ
 դարուն մէջ ըրիստոնեայ եղաւ Տրդատ
 Թաւաւորի դարձէն քիչ յետոյ: Պարագայիս
 հետ կապուած է Հոփսիսմեանց մարտի-
 րոսութեան պատմութիւնը, զոր մեզ ա-
 ւանդել է Ազաթանգեղոս իր պատմութեան
 մէջ և հայ ծիսարանը կը վկայէ, ի նպաստ
 աւանդակէպիս՝ Գրիգոր Լուսաւորչայ վը-
 կայութիւնն ունինք, և Խորենացւոյն ներ-
 րողեանը սրբուհեացս վրայ: Կը համարի
 Լըքլէրը՝ զրչի հարուածով մը՝ (հետեւելով
 ոմանք) որ թերեւ այս է Փաղերիոսի այլ-
 ույն վկայերիսի մարտիրոսութեան պատ-
 մութիւնը:

Հայոց մէջ, կ'ըսէ հեղինակս, ծիսա-
 րանն և սրբախօսութիւնը Գրիգոր Լուսա-
 ւորչով կը սկսի, որ 302ին պատրիարք
 ձեռնադրուած է: Իր և հետեւողաց ջանքով
 ձեւակերպուել է հայ ծիսարանը և սրբոց
 պատմութիւնը և ներդրուանք և պաշտա-
 մունք և տօնախմբութեանց կարգադրու-
 թիւնք: Մասնաւորապէս առ այս Գիւտ
 կաթողիկոս ջանք ունեցել է, գործակից
 ըլլալով Սուրբ Մեսրոպայ: Հինգերորդ
 դարուն Եղիշէ վարդապետ, հայ Քանոպո-
 նը, կը գրէ վարդանայ կրած հայածանքը:
 Ութերորդ դարուն Փազիկ՝ Ասողմայ վան-
 քի Աբրայի ասորերէնէ հայերէնի կը
 Թարգմանէ սրբոց վարքերը և այս իւր
 գործը կը կոչուի Յայմաւուրք: Զարբ-
 հանելեան վարդապետ՝ Հայկական Հին
 Դպրոցութեան պատմութեան մէջ (երես 568)
 այս նկատմամբ կը գրէ՝ Թէ ՆՐԹուականին

գրուած գրքի մը մէջ ալ կը յիշատակուի Ատոմ Անձնացի, տասներորդ դարուն առաջին քառորդին մէջ սուրած, որուն հրամանաւ Սրտաւագդ Մարգարունեաց տէրը՝ «բացայայտեաց զսուր պատուիրանս»։ Ներբողեան մ'ալ կայ «ի զբնագիրս ի սուրբ կարասպեան Յովհաննէս՝ երանելոյն Տեառն Ատովմայ Անձնացեաց եպիսկոպոսի ասացեալ՝ զկարասպետին մեծի զյիշատակս տօնելով, զկուսութեանն հանդէս գովեսցուց»։ Հաւաքում մ'ալ յօրինեց սրբոց վարուց և դասաւորեց հոովմէական ամսոց օրերով. այս պատճառաւ յոմանց Ստոմադիբ ըսուեցաւ իր անունովը և յոմանց Հոռոմադիբ. ոմանք ալ Տօնացոյց կամ Տօնացուցակ կ'անուանեն զայն։ Ասողիկ՝ Ատովմայ Սուրբ Սիւտին առաջնորդ Գագկայ կ'ընծայէ այս կարգաւորութիւնը։ Յիշատակագիր մը վարագացի կը կոչէ զսա և կը յաւելու թէ «ի Ռուին Նիմ' ըզհոռոմադիբն կարգաւորէր»։

Հոս լրջերը՝ Լանկուռայի հայ պատմութենէն կը քաղէ հայ վկայարանութեանց աղբիւրները, այսինքն Ագաթանգեղոս, Փաւստոս Բիւզ. Մեծին Ներսէսի վարուց պատմիչ, Խորենացի, Եղիշէ վարդապետ և Ղազար փարպեցի։

Մեր Յամաւորաց և ճառընտրաց աղբիւր կամ սկզբնական ակունք եղած պէտք է ըլլայ Եւսեբիոս Պամփիլացին (Գ. դար) և Մետափրաստէս (Թ. դար)։ Յօրինողը կամ թագմանիչը պէտք է ըլլան զլիսաւորապէս Ե. դարու մեր սուրբ թարգմանիչը և յաջորդարար մինչև մեծն Վկայասէր, Շնորհալի մինչև երեքստասներորդ դար։ Ըստ Ագեբեանի՝ զլիսաւոր հեղինակ ճառընտրաց շատերէն առաջ՝ Գագիկ վարդապետ Ատովմայ վանքին առաջնորդ Թ. դարուն մէջ գործակցութեամբ իր Գրիգոր սարկաւազին Ասորերէնէ թարգմանել է սրբոց ոչ սակաւ վարքեր, և մատենան կոչուել է Առամադիր. Թ. դարուն մէջ Յովհաննէս հայկազն բժիշկն ալ թարգմանել է յունէն և այլ սրբոց վարքեր, ինչպէս և ուրիշներ յաջորդ դարուց ժամանակ։ Վկայասէր՝ ինչ որ հայերէն չէր

գտնուել՝ զանոնք թարգմանեց «զոր ոչ գոյր առ մեզ հայ գրով, մեք աշխատու թեամբ թարգմանեցաք»։ Եղածները՝ կը հետեին որ հաւաքել է։ Ճառընտրանքը ընդհանրապէս կը բովանդակեն վարք, վրկայարանութիւնը սրբոց՝ ներբողեաններով, ճառերով։ Յայտնաւորք կ'ամփոփեն միայն սրբոց վարքն և նահատակութեան կամ տօնախմբութեան օրը։

Ագեբեան երեք կամ չորս տեսակ Յայամաւորք կը դնէ մեր ազգին մէջ։ Առաջին՝ Հայ Յայամաւորք յոյն ամիսներու օրերուն վրայ բաժնուած, որոնց տարեգլուխը կը սկսի Սեպտեմբեր ամսէն՝ սրբոյն Սիմէոնի սինակեցւոյ տօնէն, և զայս կ'անուանէ Մայր Յայամաւորք, յոյնէն Ի հայ հին թարգմանութիւն ըլլալուն պատճառաւ, և ասոր հետեւողութեամբք այլը յօրինուած են։

Երկրորդ Յայամաւորքն է Տէր Խորայէլի օրինակը։ Սա մեծ համբերութեամբ կ'առնու հայ Յայամաւորքը Հոովմայեցոց ամիսներուն վրայ, Յունուարէն սկսեալ կը կարգաւորէ դնելով փաղօցի ԻԻ և Յունուարի ա, և այլն։ Վկայարանութեանց շարադրութիւնըն առաջինէն աւելի կը փայլին հայկաբանութեամբ, և կը յաւելու յոյն և հայ սրբոց վարքը։ Գիտելի է որ Տէր Խորայէլ այս գործոյս կը ձեռնարկէ թախանձանաց վրայ Ջալաղաւային, Վանասկան վարդապետին հրամանով՝ ի մէջ ԺԳ դարուն։

Երրորդ Յայամաւորքն է Կիրակոսի վարդապետի Արեւելոյն կամ Գետկացոյն Ժե դարուն մէջ, որ կը սկսի ըստ Հայ-Յոյն Յայամաւորաց Սեպտեմբեր ամսէն, միշտ ունենալով հայերէն ամիսը Սարկաւազ վ.ի անշարժ հաշուին համամատ, և սկիզբն է «ի գրուս ամսոց փոյլ հարեք»։ Երկու նախընթաց Յայամաւորքներէն միշտ օգտուած է սա, և զուցէ գործ է այս՝ աւելի Սարկաւազ վ.ի, և Կիրակոս շարունակած ըլլալ։

Չորրորդն է սովորական Հայոց Յայամաւորքը՝ տպագրուած՝ Ի Կ. Պոլիս, խառն գործ՝ առաջին երեք Յայամաւորաց և

մէջը ներմուծուած աւմկական ոճով ինչ ինչ անճաճ իրեր, և այս է աւելի գործ Գրիգոր խլաթեցոյն կամ Ծերենցի ժեղարու մէջ, և աղամաղութիւնքն են տպագրողաց ժամանակին ոգեբանութեանց արդիւնք:

Ընթերցասիրաց հետաքրքրութեան համար համառօտ կերպով կը ներկայացնեմ վանատանս ձեռագրատան մէջ (գարան Ա. Գ) թիւ 1042. Ա. Յայսմաւորք Հայոց Ռձիւն = 1676 Թուականին գրուած: Թուորք՝ 664. Մեծօրիսն՝ 43 X 30, Գրուորիսն՝ երկսիւն. Գիր՝ բոլորագիր, Նիւր՝ մաքուր, սպիտակ, ողորկ թուղթ. կազմ՝ տախտակ կաշեպատ, խորաքանդակ խաչադրոյմ և այլ զարդերով. Գրիլ՝ Սարգիս Տիրացու. Անտոն, Զաքարիա, Պողոս և Աստուածատուր քահանայք. Թուական՝ Ռձիւն = 1676.

Մայր Զեռագրացուցակը (էջ 382) կը գրէ՝
« Ա. բոլորագիր՝ մեծադիր, բարձր և թան-
« ձր, գրեալ ի մեծահանդէս քաղաքս
« Կոստանդինուպոլիս, ընդ հովանեաւ Ս.
« Լուսաւորչի և Սուրբ Գէորգի և այլոց
« սրբոցն, ի Թուականիս Հայոց Ռձիւն
« օգոստոս Ժ.. ի հայրապետութեանն Հա-
« յոց, որ ի Սուրբ Էջմիածին Տեառն
« Տէր Յակովբ Կաթողիկոսի... ի վերջոյ
« գրի և թուղթն դաշանց: Ետ մեզ Տ.
« Գրիգոր Ղափանեցի՝ եղբայրն Պարոն
« Յօնանի վաճառականի 1753 = ՌՄԹ
« ի Մարտի 10 »:

Զեռագրիս ունի սկիզբն ու վերջը մի մի մագաղաթ թուղթ իբր պահպանակ: Գլխաւոր գունաւոր պատկերքն են.

Առաջին՝ Լուսաւորչի յոյն եկեղեցական զգեստով՝ վարդապետական օձապատ գաւազանով, լատին խոյրը գլուխին վրայ կրելով, աջ ձեռաց բուլթն և մատնեմատն իրար միացուցեր է, ձախ ձեռքին մէջ ունի մատեան մը. վարդապետական գաւազանը կը յենու խոզի մը վրայ՝ որ կը յատկանշէ զՏրդատ և իւր առջև կայ ծըն-
բաղիր խոյրադիր աղաչաւոր մը: Պատկերիս վերև կան երկու շէնքեր, որոնց մէջտեղն է կաթողիկէ մը: Պատկերս է երփներանգ և ոսկեզօծ: Իւր հանդէպ էջին

վրայ կայ նման գոյներով խորան մը, մեծ լուսանցազարդ մը, թռչնակար զլիազրեր և վերև մէջտեղը՝ Յիսուս բազկատարած:

Երկրորդ՝ մեծադիր գունաւոր պատկերն է Յիսուսի՝ մոգերուն յայտնուիլը. ուր կան Ս. Յովսէփ, Աստուածամայր, երեք մագեր ծնրադիր. կան ևս երկու տնակներ և մետալիոնի ձեով բոլորակի մէջ Յիսուս մանուկ Աստուածամոր գրկաց մէջ: Աւոր հանդիպակաց էջին վրայ կայ՝ նմանապէս փոքր բոլորակի մէջ՝ Յիսուս մանուկ Տիրամոր գրկաց մէջ հանգչելով գունաւոր մեծադիր խորանի մը մէջ, որուն մի կողմը զետեղուած է երկայնաձև երփներանգ եզերազարդ մը և ստորեւ խորանին կան գունագեղ թռչնակար զլիազրեր:

Երրորդ մեծադիր գունաւոր պատկերն է Յիսուսի յարութիւնը՝ գերեզմանով և պահպաններով, և ասոր հանդիպակաց երեսին վրայ կայ՝ մեծադիր դարձեալ՝ երփներանգ խորան մը, լուսանցազարդ մը և թռչնակար զլիազրեր:

Չորրորդ փոքրադիր գունաւոր պատկերն է թուղթի էջերէն միոյն մէկ մասին վրայ եղած Յիսուսի խաչը, որուն թեղ ներքև կան երկու թագադիր անձինք, հաւանաբար Կոստանդինոս և Տրդատ. իսկ նոյն էջին միւս մասին վրայ կայ վերև Հայր, Ս. Հոգի, Որդի, որոնց ներքև ըզգեստաւորուած կեցեր են ըով ըովի Ս. Սեղբեստրոս և Ս. Լուսաւորչի՝ լատին խոյրով:

Զեռագրիս վկայարանութեանց սկզբընաւորութիւնք միշտ զարդարուած են գունագեղ եզերազարդ թռչնակարներով, ծաղկենկարներով և կամ այլ երփներանգ զլիազրերով և զարդերով:

Յայսմաւորքս կը սկսի Նաաստարդ == Ազատոս՝ ընդարձակ ցանկով և յետոյ կը դնէ սրբոց վարքը՝ հայկական և արեւմտեան թուականներու վրայ բաշխելով: Առաջին երեք ամիսները հոս ներկայացուցած ատեննիս՝ ըստ կարելոյն պիտի ջանանք համառօտել ա. Գանկը. Բ. Վկայաբանութեանց սկզբնաւորութիւնք նշանակել. Գ. Ուր հայկական նորութիւն կամ ծանօ-

թուփին մը կը պարունակէ՝ զանոնք ուսումնասիրաց առջեւ պիտի պատկերաւորենք բառ առ բառ, և կամ անոնց հաստատութիւնը դնել:

*
**

ՆԱԽԱՍԱՐԳ. Ա.

* ՆԱԽԱՍԱՐԳ Ա. ՕԳՈՍՏՈՍ ԺԱ. — Պատմ. Գլխակայ վանից և այլն: Յորժամ Լուսաւորեաց Սուրբն Գրիգոր...: Կը պատմէ, որ Լուսաւորիչ ի Ղեւոնդեայ պատրիարզէն ձեռնադրեցաւ եպիսկոպոսական Հայոց և զնաց ի Մամակը, որ է Կեսարիա քաղաք՝ առաջին աթոռ հայրապետական ազգիս հայոց կարգեալ ի Թաղէսէ առաքելոյ...: Ս. Գրիգոր կը դառնայ աստի՝ սուրբ Նշնարեներով՝ Թորգան, կը հաւաքէ «բզդասս պաշտօնէից և զսուրբ գիրս կտա՝ կարանացն Աստուծոյ, վասն կարգաց սուրբ եկեղեցւոյ»: Կը ձեռնադրէ Դրփնայ դաշտին եպիսկոպոս՝ Սուրբն Դիմառիոս և զայլս բազումս յԱսորուց և Յունաց որ և զիս իսկ զՋենոր ոչ եթող զնալ առ Էդիազար եղբայրն իմ »:

Նաւասարդի առաջինն օրը հեթանոսութեան առասպելին պատմութիւնը՝ ունի անուան նկատմամբ տարբերութիւն Տաշեանի ցուցակէն (էջ 25): «Թագաւոր մի կայր Հայոց Արտաւազ անուն և ունէր որդի մի ինչազար Եդիար անուն: Եւ ի մեռանէն Արտաւազայ ոչ ետ զԹագաւորութիւնն Եդիարայ... վասն որոյ և աշխարհս վրդովեցաւ և աւերումն լինէր ոչ սակաւ: Եւ յաւուր միում հեծեալ Եդիարն ի ձի, և ետ փող հարկանել, թէ կամիմ թագաւորել, և ել զնաց ընտիր հեծելօք ի զբոսանս: Եւ ելեալ ի վերայ կարմնի գետոյ՝ վասն անցանելոյ, և անդէն շարժեալ զնա դնն, անկաւ ի գետն և կորեաւ: Եւ հեծելազօրքն համբաւեցին՝ թէ աստուածքն Եդիարայ յափշտակեցին զնա և եղին ի Սեւա լեռն, որ է Աւագ Մասիս և անդ կայ շղթայած և երկու լուն, մին սպիտակ

և մին պոռ՝ լիզն հանապազ զշղթայսն Եդիարայ: Եւ ի տարելիցն ի մին մագն զայ, որ թէ կտրի՝ նա ելնէ և զաշխարհս անցուցանէ: Վասն այսորիկ կարգեցին կախարդքն առասրել դիմօք թէ ի տարեմուտն ի նաւասարդի ի ա, ամենայն գործաւոր գիւր գործն զինչ և իցէ, կոխէ երեք անգամ, դարբինն և այլն, Զի կապն Եդիարայ ի մագն եկեալ է ի կտրիլ, դարձեալ հաստանայ և ամբանայ, որ ոչ ելանէ Եդիարն և զաշխարհն անցուցանէ: Այսպիսի առասրել դիմօք վարէին հայք մինչև ի Ս. Գրիգոր Լուսաւորիչն, որ խափանեաց զայն և կարգեաց տօնել ի մէկն Նաւասարդի՝ սրբոյն Յովն. կարապետին և Աթանազիոնեայ հայրապետին »:

* Ն. Բ. ՕԳ. Ժ. Վկայար. Սրբոյն Անիկոտիս և Փոտինոսի, Անթոն արքայն Դիակղէտիանոս... Վկայար. Սրբոյն Լօրենտիոսի Քսենոտոս և Պօղոսի. Եւ սքեա էին յամս Դեկտիս...:

* Ն. Գ. ՕԳ. Ժ. Վկայար. Սրբոյն Մարկեղոսի եպիսկոպոսի, Հեմնայ և Պեղեգեայ, Սուրբ Մարկեղայոս էր Կիպրոս... Վկայար. Սրբոյն Հեմնայ և Պեղեգեայ և Փիղգայիդեայ. Սուրբ ազգականք էին լորից զինուորացի՝ Բասուսի... — Ի ամին աւուր կատարեցաւ ի Գրիստոս սուրբն Մարթին. Սա էր աշխիւն կոպալչո կնոջ... Յայսմաւուր յիշատակ է սքանչելեացն Ռոմբատու. Սա էր ազգաւ Լատին...:

* Ն. Գ. ՕԳ. Ժ. — Տօն է Շողակաթին իջման Միլածնին ի Վաղարշապատ քաղաքին: Լուսաւորիչն մեր սուրբն Գրիգոր յորժամ ել ի վիրապին և եկն... Տեսլեանս նկարագիրը նմանութիւն է Ագաթանգեղոսի: Տաճարաց շինութեան սկիզբը կը դնէ կանուխ և Լուսաւորչայ եպիսկոպոսական ձեռնադրուելէն վերջը՝ Կ'ըսէ՝ «Մեծաւ ջանիւ կատարեցին զշինած տաճարացն զշողակաթին և զսուրբ Կուսանացն և մեծահանդէս պայծառութեամբ արարեալ նաւակատիս և օրհնեցին զեկեղեցիսն ի փառս Քրիստոսի...»:

Վկայար. Սրբոյն Ուրսիկինոսի վկային. էր սա ի քաղաքէն Սեբեկտիոյ:

* Ն. Ե. ՕԳ. ԺԵ. Տօն է փոխման ամէնօրնեալ սուրբ Կուսին Մարիամու Աստուածածինին. Պարտ և արժան և գիտել զգրեալսն...:

Կը պատմէ առաքելոց և եօթնասնից տարաշխարհէ հաւաքումը, Տիրամօր ննջումը և թաղումը, Բարդուղիմէայ յետ ննջման գալուստը, և զինքը միթիթարելու համար կ'ընծայեն առաքեալք Յովհ. Անտարանչի կիպարի տախտակի վրայ յօրինած Տիրամօր պատկերը. մանաւանդ թէ կ'ըսէ, ձայն ի վերուած եկն ի լսելիս առաքելոցն և ասաց՝ Տուք զփայտեայ պատկերն... ի Բարթողիմէոս... զի զվազ միթիթարեսցի և տարցէ ի վիճակն իւր:

* Ն. Զ. ՕԳ. ԺԳ. — Վերստին տօն է Փոխման Աստուածածինն և յիշատակ պատկերին Քրիստոսի ի դատաւական. Աբգար արքայն Ասորոց Միջագետաց, որ էր ի քաղաքին յառնայ...:

Կ'ըսէ. Անանէ էր՝ և տէր Ապահունեաց և Յովհաննէս մի պատկերահան: Աբգարու առ Յիսուս գրած թիւոյն օրինակն է. Աբգար որդի Արշմայ և իյիսան աշխարհաց Հայոց և Ասորոց, Միջագետաց. առ Յիսուս քաղերար, որ երեւելցար ի Հրեաստանէ՝ որոյցն լուեալ իմ վստե իւր և վստե նշանացոյ՝ զոր անեա, կամ Աստուած և զոչ, որ զայդ անեա, և կամ որդի Աստուծոյ իշեալ յերկնից: Քաղաք մի ունիւր փոքրիկ պարսպաւ, որ և գիղեցիկ պտղաւնաւ, արդիւնաւոր և ցանկալի, որ բաւական է երկոցունցս ի պայս պաշտման: Այլ և շնեցար թէ Հրեայոց ևս տրուելն զքեմ. արդ աղաւնւ զբեզ, զի եկեալ բռնիկս զիս ի լար ցաւոց աստի որ ունի զանէն իմ... Անանէ կը ներկայացնէ թուղթս Գամաղիէի տան մէջ Յիսուսի և նա կը հրամայէ թովմայի, որ զբէ պատասխանը այսպէս: Յիսուսն Նազորացոյ առ Աբգար արքայոյ՝ արքայից ի Տէր խնդալ: Երանելի այնմ որ ոչ իցէ տեսեալ զիս և հաւատայ յիս: Զի գրեալ է վստե իմ. թէ որք տեսանեն զիս ոչ հաւատան յիս. և որք ոչ տեսանեն՝ նոքա հաւատան և կիցեն. Մակաւ ինչ ժամանակս աստ եւ և վերաբաւում աւ սյն, որ առաքեալն զիս և յետ համբաւանալոյն իմոյ՝ զմի ունի յաշակերտաց իւրոց առաքելոց առ քեզ, որ եկեալ բռնիկսցի զքեզ. և տացի քեզ կեանս և որոց բնոց քեզ գցեն: — Պատկերահանն էր չի յաշողիբ նկարել զՅիսուս, նա կ'անուո դաստաւ:

առկ մի՝ սպիտակ վաշ իրիւ. գրկալսպի մի, կզերքն ոսկիքն՝ հայկ զաստուածային երեսօքն և իսկոյն նկարեցաւ ի նմա պատկերն տիրոսնակսն... Յետ ժամանակաց՝ յաւորար Կրտսան զնայ որոյնց լիւնի տարաւ զուրբ դատաւսակն ի Կրտսանքնագօրիս ի թիվակնիս Հայոց գծ և դր ամիւն:

* Ն. Է. ՕԳ. ԺԷ. — Վերստին տօն է Փոխման... և վկայար. Միւստնայ քահանային. Յամս Գիկոսի ամբարշտ արքային... վկայար... սրբոց երկուց եղբարց Խորոսի և Փլորոսի. Սորա կորարք էին... վկայար. Դոմոսիանոսի բռնիկն, որ էր ի Տարսնոն քաղաքին...:

* Ն. Ը. ՕԳ. ԺԸ. — Վերստին տօն է Փոխման Աստուածածինն և վկայար. սրբոյն Ստեփանոսի Ունեցելոյն և զո վկայիցն. Այր մի էր ի Կոկիսոն քաղաք Ղազար անուն և կնոջ նորա Մարիամ. ազգաւ հայ. տառաւոցաւ որդի և յետ ոչ տառաւորացիցն զտղայն և կոնցիկն Ստեփանոս. և քահանայն Կրտսանցի, որ մկրտեաց զՍտեփանոս, յամենայն կիրակից պատարագ մատուցանէ և հաղորդէր զՍտեփանոս...:

Յուրիանոս հալածանք կը հանէ. Ստեփանոս ծնողաց և այլոց հետ փախուստ կու տայ քաղաքէն, կը հասնի քարանձաւ մը, զոր Ս. Բարսեղ կիկղեցի յօրինած էր յանուն Ս. Աստուածածին. հովիւք զիրենք կը մատնեն Սկիւրտ գետաւորին, և զինուորք զիրենք կը տանին ի Բերդն կանչի, ուր կը նահատակուին ամէնքը:

Գործնցաւ այս ի նոյն առաւրտ միւնէ էրն Յուրիանոս ի Պարսից պատերազմն, ուր սատակեցաւ:

* Ն. Թ. ՕԳ. ԺԹ. — Վկայար. սրբոց Աստուանց նահատակաց. Թազարուրն Պարսից Յազկերտ լար իւրատով մագուցն յարոց հորածան...:

Կը յիշատակուին անուամբ Աստմ Գնունի, իւր որդին Վարոս և Մանաճիւր տէր Աշտուանաց: Վերջնայ մարտիրոսութեան վայրը կը կոչեն՝ Աշարաւոց, ոչ կոչի Աշարաւից վանք: —

Նահատակութիւն սրբոյն Անդրէի զօրավարին և բանակի ներին: Մոռարն Անդրեաս ստրատիարք էր յամս Մարտի միսնոսի...:

Անտիոքոս կը հրամայէ տանիլ զինքը և քրիստոնեայ զօրականք Արևելք՝ յայդարսն Հայոց... որոնք բարի հաւատով կատարեցան ի քրիստոս... էին ոգիք բՈՒ և ԱՅ:

* Ն. Ժ. ՕԳ. ի. — Վկայար. սուրբ մօրն Վասայի և երեց որդւոց նորա. Սըրբոնիկն Վասա եր յամա Մարտիրոսանի... ի քաղաքն Եդեսիոյ. ունէր երիս որդիս... թեղեցիոս, Ագապիոս, Պիստիոս...

Յայսմ աւուր տօն է սուրբ պատկերի Աստուածամօրն. Անտարախիչն Յովհաննէս յաւոր անշման Աստուածածինն Կուսին կուփեաց տախտակ մի կիպարի... — Պատմութիւնն ունի յաւելուած... Առաքեայն Բարդուղիմէոս՝ առեալ զկենդանացիր պատկերն և երբ ի հայս, և եղ ի խորափոր մի լերանց կաղցաց առ ափն Տիգրիս գետոյն և անդ շինեաց եկեղեցի յանուն սուրբ Աստուածածինն, որ կոչի Հոգոց Վանք...

* Ն. Ժ. ՕԳ. ի. — Վկայար. սուրբն Ագաթոնիկոս: Սուրբն Ագաթոնիկոս՝ որ քաղմանի յարեյաղր, Մարտիրոսան աւարարիտ արքայն տապեաց... — Վկայար. Սըրբոն Յուստինոսի. Սա զօրական էր ի Հռովմ բաղաքն... — Յայսմ աւուր յիշատակ է Սասունէ մարգարէին: Որ ուխտիչ խնդրեալ հղի. յԱստուծոյ... — Վերջին մասն է գանձատանքս հեղինակին. Եւ արդ զմեզ ով որ ողբասցէ: Զարեան կոյր տապալնորդք. փոյր ի կեդրեան նմ և յօտար ի վնասելն: Ըստ նմանութեան Հրէից կոյր տապալնորդացն: Որ զծանրորիւն օրինացն բողբալ և շունամբ տառաւորդիչ գանձեալս և զլաման...:

* Ն. Ժ. ՕԳ. ի. — Տօն է Թումայի առաքելոյն. Յետ համարանայոյն Քրիստոսի յերկինս... ենաս վիճակ Թումայի... երբուր ի Հնդկաստան.

Առաքելոյ վաճառուք կը պատմէ երկարօրէն Արքանէս հնդկաստանցոյն Յիսուսի ձեռք, և աւոր հրաշագործութիւնք և մարտիրոսութիւնք և ապա ստեց ամփոփոյր կ'ընէ: Սրբոյ նշխարաց համար կ'ընէ Թէ «տարաւ Միջագետք Արտուոց, յետոյ Հայոց Աղմեկաց գաւառ խոյց գիւղ, Ռշտունեաց գաւառ Պարթիս գիւղ. ուր շինեցին եկեղեցի և եղին ի գրանդի եկեղեցւոյն և շինեցաւ տեղին վանք միաբանակեցաց»:

* Ն. Ժ. ՕԳ. ի. — Վկայար. Երննոսի եպիսկոպոսն. Սուրբ եպիսկոպոսն Երննոս՝ էր ի Սերմիոյ գաւառն...:

Յայսմ աւուր յիշատակ սրբոյն Լեւրաիոսի. Սա աշակերտ էր սրբոյն Ոնորատոս...: Վկայար. Սըրբոն Փորինեայ, որ Թարգմանի լուսեղէն: Սա այն կինն է աւարաբիւն, որ ի Սուրբ քաղաքի, Քրիստոս զշտըն խնդրեաց...:

* Ն. Ժ. ՕԳ. ի. — Տօն է Դանիէլի մարգարէին. Դանիէլ մարգարէն էր ի ցեղն Յուդայի...:

Կը պատմէ համոզող նահատակութիւն երեց մանկանց:

* Ն. Ժ. ՕԳ. ի. — Վկայար. Սըրբոն Աբուտիմոսի. Սուրբն Աբուտիմոս էր ի Տեհիտիոյ կղզոյն, յամա Դիոկղետիանոսի...: Յայսմ աւուր տօն է սուրբ Աստուածածնին. Լուսաւորիչն մեր Սուրբն Գրիգոր յորժամ կործանեաց զիգակսն պատկերն Անանիայ. կանոնեաց ի սին աւուր տօնել Սրբոնոյ Աստուածածնին:

Գեղեցիկ ներբողեան մ'է գրութիւնս առ Տիրամայրն, Թերես գրէն յօրինուած նմանողութեամբ:

* Ն. Ժ. ՕԳ. ի. — Վկայար. Սըրբոն Անդրեանոսի և Կնոջ նորա Անատոլայ և իգ Վկայիչն. Սուրբ Վկայն Քրիստոսի Անդրիանոս և անուսինն իւր Անատոլայ էին ի քաղաքն Նիկիոյ իդեան...:

* Ն. Ժ. ՕԳ. ի. — Վկայար. Սըրբոն Սուրբիասեանց. Առաքեայն Քրիստոսի սուրբն Թադէոս, յորժամ եկն ի Հայս աշակերտեաց զսուրբ Ոսկի և զընկերս նորա:

Կը պատմէ Ոսկեանց նահատակութիւնն, որ գային ի Հռոմեաց քիսպանք առ Սանատրուկ արքայն ոգիք Նիկե, որոց անուն գլխաւորին էր իսիւսի. ոսկի. զգլխաւորն իսիւսի արար յաւանայ...: Որոք Առաքելոյ կատարմանէն յետոյ՝ բնակեցան մեր ի յակունսն Եփրատայ ի լեռն Ծաղկէյ. որոք կը խօսին Արտաշէսի, Սաթենկայ և Աւանի եկողաց հետ Քրիստոսի հաւատոց վրայ: Յետիւց կը հաւատան և կը մկրտուին՝ ի յակունսն Եփրատայ ի ծաղկաւտ տեղին, և կը կոչուին Սուրբիասեանք: Կը

տեսնեն զԳրիստոս. կը կանգնեն խաչ և կ'ա-
նուանեն Աւետիսաց խաչ: Թագաւորին որդիք կը
սպաննեն զՈսկեանքն. իսկ Սուրբասեանց զԲԼ-
խաւորն, որ Բահադրաստ կը կոչուէր մկրտու-
թեամբ, անուանուեցաւ Սուրբաստ. և իր ընկերնե-
րով՝ որոնց անուանքն են Ղունկիանոս, Պօլե-
տէս, Կոտրաստոս, Իսփրոն, Մեմիանոս, Փով-
կաս, Զերանգիոս, Դոմէտիանոս, Անդրիանոս,
Ջոսիմոս, Բիքտորիոս, Թալիոս, Յորդանէս, Ա-
նաստասիոս, Յակոբոս, Թէոդորիոս, կը ճգնին
քառասուն և չորս տարի Սուկաւ լեռան վրայ:
Ալանաց Դասիանոս Թագաւորին Բարլանայ զօ-
րավարին ձեռքով կը նահատակուին սուրբերս,
որոնց մարմինը անապական կը մնայ երկու
հարիւր հրեւուն տարի՝ մինչև ցնոստանդիանոս
Մեծն, որ Բրեշտակի ազգամաբ կու գայ Սուկաւ և
կը տանի «զմարմին քօշիցն յարեմուտ»: Մար-
գարէացաւ Թագաւորս, որ երբ յայտնուին սըր-
բոցս նշխարք՝ «նորոգեցի քահանայապետու-
թիւնն Հայոց» այժմանաւոր ցեղէն սրբոյն Գրիգօ-
րի, և Թագաւորութիւնն ազգէն Արշակունեաց:
Մարտիրոսութեան տեղէն բխեց ազգիւր բժշկու-
թեան ամենայն ցաւոց ըստ նմանութեան Սելով-
կայս... ժամանորապէս չնորս է բժշկութիւն բորո-
տաց պիտակողաց, և այլն: Երկու լերինքն կոչուե-
ցան Սուրբ Ոսկեանք և Սուրբ Սուրբասեանք:

* Ն. ԺԲ. ՕԳ. իր. — Վկայար. Սրբոյն
Ստրաստոնիկոսի, Փիլիպպոսի, Էւտիջանո-
սի և Ռենսիմեայ. Սոքա եկն ի բողոքեան
Նիկիովիդիայ...:

Յայսմաւուր յիշատակ սրբոյն Ռենսիմա,
ոչ թէ աշակերտին Պօղոսի, այլ սորա
ծնողքն էին ի Կեսարիայ Պաղեստինաց-
ւոց... — Վկայար. սրբոյն Անտիոքաց բը-
ժըշկին. Սա էր ի Սերաստիոյ...:

* Ն. ԺԹ. ՕԳ. իր. — Տօն է զլիստամանն
Յովհաննու Կարապետին. Սոչր Կարա-
պետն Քրիստոսի Մկրտիչն Յովհաննէս սրբ-
բոսբեամբ սեւա յանապատի...:

* Ն. Ի. ՕԳ. ի. — Վկայար. Սրբոյն
Վիլիստիոսի եպիսկոպոսին. Սոչր եպիս-
կոպոսն Վիլիստիոս ի քանտի էր...:

Վկայար. Սրբոյն Տատիանոսի. Ջոր կա-
լաւ անօրէն դատաւորն Ռարթանոս ի կրօնիւ-
պոյիս...:

Վկայար. սրբոյն Ատենեբսեհի, որ էր
որդի Պրորոսի Հռոմայ Թագաւորին...
գնաց ի Նիկիովիդիա և կացեալ առաջի

Լիկիանոսի և ասաց համարձակ. Վլան էր
կոտորեալ զգօրն Հայոց անխելայաբար և
զամենայն քաջ զօրականն ընդ հողով առ-
կանաւ: Ոչ գիտիս զի քչևամիկ աներկիոյ
սպապատկեն ի Հասմոն և աներկն զերկիրս
մեր զամենայն: Ասէ Լիկիանոս՝ մի թէ և
դու բրիստոնեայ իցիս: Ասէ Սուրբն. Այս
բրիստոնեայ եմ... Ընդ որ բարկացեալ
հրամայեաց զզլուիս...:

Վկայար. սրբոյն Տիմոթէոսի. Սա էր
ի Պաղիստինոս կատարեալ առաքինորեամբ
և քարի վարդաբ. ի յիսանն Կոզմայ Ռարթա-
նոս կալաւ զեմ...:

Ի սմին աւուր Սուրբն Ագապիոս, սրբ-
բոսհին Թեկլ՝ ի Գազայ բաղաքին յանհա-
ւատիցն չարչարեցան և ի Քրիստոսէ պը-
սակեցան...:

* Ն. ԻԱ. ՕԳ. իա. — Գիտ զօտոյն
Ամենօրհնեալ Ս. Աստուածածնին Մա-
րիամու: Ամենօրհնեալ Ս. Աստուածածնի
գօտին գօտին յերաւաղեմ և տարան ի
կ. Պոլիս:

Գովեստ մ'է Աստուածամօր մեծութեանց և
առաքինութեանց իմաստաւից չարագործեամբ:
Վերջին մասի գլխաւոր տողերու սկզբնագիրք կը
ձեւացնեն Գրիգորիէ:

* Ն. ԻԲ. ՍԵՊՏ. ա. — Տօն է Յեսուայ
որդւոյ Նաւեայ. Յեսու որդին Նաւեայ
աշակերտ էր Մովսէսի...:

Յիշատակ վարուց երանելոյն Սիւնի-
կեցւոյ Սիմէոնին. Սա էր ի մեծ քաղաքն
Անտիոքայ, ի ժամանակս Լեոնի...:

* Ն. ԻԳ. ՍԵՊՏ. բ. — Վկայար. սրբոյն
Մամասայ. Յամա Ռոնդիանոսի անօրէն ար-
քային այդ մի բրիստոնեայ ի գառառն
Պամփիլեայ...:

Յիշատակ է երանելոյն Յովհաննու Պա-
հեցողին. Սա պատրիարք էր ի Կոստանդի-
նոպոլիս...:

* Ն. ԻԴ. ՍԵՊՏ. գ. Վկայար. Անթիմոսի
եպիսկոպոսին. Յամա անօրէն արքային
Մարտիրիանոսի էր ստարն Անթիմոս եպիս-
կոպոս ի Նիկիովիդիայ...:

Վկայար. Աթմանսի եպիսկոպոսին և
յիշատակ աղախնոյն Աստուծոյ Թանթուշի.

Սրբոհին խանդոչ էր ի Սլեկիկոյ ի ժաւանակս... Վաղերիանոսի...

Կը պատմէ Սրբուհոյս ճգնութիւնը և Ս. Աթնաս եպիսկոպոսի նահատակութիւնը Տարսոնի մէջ:

Յայտ աւուր զերկու ծառայան խանթուշի զՄարիսիմոս և զԵրփիտոս կացուցին առաջի Որեղիանոսի թագաւորին...

Յայտաւուր յիշատակ սըսնչելեաց ինչ որ եղև վասն ուղղափառ հաւատոյ ի Պամփիլեայի... (Օտար ձեռք մը սխալ նախանձով մը աւերել և ցրել է, չառական և վերջացոյ սոստին երեսը սև կենայ՝ դնելով):

* Ն. ԻԵ. ՍԵՊՏ. Դ. — Վկայար. Բարեւայ սուրբ հայրապետին և երից աշակերտացն. Յամս Նոմիլիանոսի. էր սուրբն Բաբիաս... յԱնտիոք քաղաքի...

Վկայար. Սրբոց մարտիրոսացն թէ՛ ուղղոսի, Ղուկիանոսի, Ամանոսի և Յուլիանոսի, զորոց հատին գծեան...

Եւարդ լուսարոք հովիւք բանաւոր հօտից...

* Ն. ԻԶ. ՍԵՊՏ. Է. — Վկայար. Խ. սուրբ կուսանացն և Սմոնի. Սրբոհի կուսալքս էին յամս Լիկիանոսի. յերկրէն թրաւոյ ի քաղաքէն Աղրիանոսիպոսէ...

Ի սմին աւուր կատարումն քահանային Ջաքարեայ հօրն Յովհաննու... Եւ յետ յորով ժամանակաց յամս սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչի բերաւ ի Հայս յարեւելե սրբոյն Ջաքարեայ և ի Եփեսոսաց սրբոյն Պանդայետի բժշկին... Եւ սուրբն Գրիգորիս բռնե... Լուսաւորչին տարաւ ընդ իւր յԱլուան և եղ յԱմարաս Եւ յաւուրս Վալազական Աղուանից արքային՝ յայտնեցան Եփեսոս սրբոյն Գրիգորիսի, և արեւն Ջաքարիայի և մասն Պանդայետի, յորոց բաւ զամ եղանք եղեւ...

Ն. ԻԷ. ՍԵՊՏ. Գ. — Վկայար. Սրբուհոյն Երինեայ կոյս վկային. Ասաքեալն Փիլիպպոս ոչ մեծն որ յերկոստասեից, այլ որ յԵսարգասացեւ... ուեկր զ. կուսան... Երմոն և Տիպ գնացին յԵփեսոս...

Վկայար. Երեքտասան մարտիրոսացն՝ Փիրսիոսի քահանային և Բիբայ սարկաւ...

ազգին և Նիւասայ ընթերցողին և այլ տասն մարտիրոսացն:

Յայտ աւուր յիշատակ կատարման հինգ հազար կուսանացն... Յամս Խոսրովոս Պարսից արքային և Յոստիանոսի յարափառ կոյսերն Յունաց... արքայն խոսրով ընտրեաց ի գերկոյց աշկունս հինգ հազար և առաքեաց ի Թարքաստան... (Որոնք ճանապարհին իրենց կուսութիւնը պահելու համար գետամոյն կ'ըլլան)...

* Ն. ԻԸ. ՍԵՊՏ. Է. — Յիշատակ Նիկիոյ Ս. Ժողովոյն. Արիոս երեցն աղեքսանդրացի... Կոստանդիանոս եւսն հրաշիրակ... Ժողովի ի Նիկիա Բիւրանացոյ... Եկին և զուարեցան հազարք... երիցունք... իսկ և պիկոպոսք երեք հարիւր և ութ և տասն և պատրիարքունքն էին... Մակարիոս Երոստակէի, Աղեքսանդրոս... Ստաբիւս Անտիոքայ, Արիստակէ Հայոց, Յուլիոս Եփեսոսի, Աղեքսանդրոս երեք Բիզանդիոյ հրամանաւ Միստոփանոսի հայրապետին: Բիքոս և Բիզենտ երիցունք Հռոմայ փոխանորդ պապուն Հռոմայ...

* Ն. ԻԹ. ՍԵՊՏ. Ը. — Տօն է Թընդեան սուրբ կուսին Մարիամու Աւտուածածնին. ի տոնմէ որդեցն Խարայի ի ի ցեղէն Յոնայ էր Յովակիմ...

